

**Վերո Երաժշտական դպրոցի տնօրեն Մ. Գրիգորյան**

**08.01.2018 – 31.12.2018թթ.**

**Հաշվետվություն**

2018թ. Վեդու երաժշտական դպրոցին քաղաքապետարանը հատկացրել է 18.200.000 դրամ, մշակույթի նախարարությունը՝ 3.500.000 դրամ (ազգային նվագարանների անվճար սովորող 15 աշակերտների համար), ծնողական գումարը՝ 5.500.000 դրամ:

2018թ. հունվարի դրությամբ դպրոցում սովորել է 202 երեխա, բոլոր ծնողների հետ կնքվել են պայմանագրեր: Դպրոցում աշխատում է 26 մանկավարժ:

Երաժշտական դպրոցը առաջնորդվում է ուսումնական պլանով: Հունվարից- հունիս ընկած ժամանակահատվածում կատարվել են 4 մանկխորհի նիստեր, դասալսումների և բաց դասեր, տեխնիկական ստուգարքներ: Համերգներ նվիրված մայրության և գեղեցկության տոնին, Ալ. Հեքիմյանի, Վ. Սուլվյով - Սեդոյի և Եվգ. Գոգայի հոբելյաններին: Կազմակերպվել է ջազային մրցույթ, այնուհետև համերգ: Ցեղասպանության 103 ամյակին և Հայաստանի պետականության 100 ամյակին նվիրված համերգներ, երեխաների պաշտպանության օրվա համերգ, դասարանական համերգներ և հաշվետու համերգ:

Դպրոցն ամեն տարի մասնակցում է մարզային համերգներին՝ Մասիսում - դաշնամուր, Արտաշատում - կլառնետ, քանոն: ՀՀ սահմանադրության օրը մասնակցել ենք մշակույթի տանը տեղի ունեցած համերգին դիոլահարների անսամբլով, շվիով և դուդուկով:

Դպրոցն ամեն տարի II կիսամյակում կազմակերպում է «Սուֆեջիոյի և գրականության» դպրոցական մրցույթ՝ բոլոր դասարաններում: Հաղթողներին բաժանվում են պատվոգրեր:

Աշակերտները II կիսամյակում հանձնում են ստուգարքներ, էտյուդներ և գամմաներ, կիսամյակի վերջում քննություններ՝ Բախ, Սոնատա, Պիեսա:

Դպրոցի սաները II կիսամյակում նաև մասնակցեցին «Արտ-Մյուզիք» արվեստի միջազգային IX մրցույթ-փառատոնին.

1. Համլետ Թևոսյան - IIդ. դուդուկ (դիպլոմակիր)
2. Մարիամ Գրիգորյան - IIդ. դաշնամուր (դիպլոմակիր)
3. Խաչիկ Հայրապետյան - IVդ. շվի (դիպլոմակիր)
4. Արտյոմ Ավետիսյան - IIIդ. դուդուկ - III տեղ
5. Նարեկ Դավթյան - Vդ. կլառնետ III տեղ
6. Արեգնազ Ալահվերդյան - IVդ. III տեղ

Քանոնահար Ալահվերդյան Արեգնազը մասնակցել է Գյումրիում «Վերածնունդ»

Դպրոցի սաները նաև մասնակցել են <<Ոսկե Տավիղ>> հանրապետական մրցույթ-փառատոնին:

1. Լևոն Քոչարյան - I տեղ
2. Արտյոմ Ավետիսյան - I տեղ
3. Գագիկ Հովհաննիսյան - II տեղ
4. Ռազմիկ Շահնազարյան - II տեղ
5. Ռոման Շահնազարյան - III տեղ

II կիսամյակում կազմակերպվել է <<Էտյուդների>> մրցույթ III – VI դասարաններում երեխաների տեխնիկական և կատարողական արվեստը զարգացնելու համար: Հաղթող աշակերտները պարգևատրվել են պատվոգրերով:

Կիսամյակի վերջում բոլոր աշակերտները սովել են քննություններ և ստացել բավարար գնահատականներ:

Երաժշտական դպրոցն ավարտել են 17 աշակերտներ և ստացել դիպլոմներ: Սեպտեմբերին դպրոց են ընդունվել 63 I դասարանցիներ, բոլոր ծնողների հետ կնքվել են պայմանագրեր: Երաժշտական դպրոցից դուրս են եկել 15 աշակերտներ: Դպրոցում սովորում են 205 երեխաներ:

I կիսամյակում անցկացրեցինք <<Էտյուդների>> մրցույթ III - VI դասարաններում: <<Ուսուցչի>> տոնի առթիվ տվեցինք համերգ՝ ուսուցիչների և աշակերտների համատեղությամբ:

<<Մշակույթային կրթության աջակցություն հիմնադրամը>> կազմակերպել էր Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար 99 երաժշտական գործիքներ տրամադրելու մրցույթ: Մեր սաները մասնակցեցին 2 քանոն, 1թառ, 1քամանչա: Գործիքները կբաժանվեն փետրվար ամսին:

Երևանի 2800 ամյակի կապակցությամբ Արա Գևորգյանը պատրաստել էր մի ծրագիր (որը կարող էր մտնել զինեսի գրքում) որտեղ 200 քանոնահարներ նվագեցին Արա Գևորգյանի հեղինակային երաժշտությունը: Հանրապետության լավագույն աշակերտ-քանոնահարները մասնակցեցին, այդ թվում նաև մեր դպրոցի 3 քանոնահարներ՝

Էլեն Ղևոնդյան - IIդ.

Լիլիթ Պողոսյան - IIIդ.

Արեգնազ Ալահվերդյան - IVդ.

Հոկտեմբերից սկսած ամեն շաբաթվա ուրբաթ օրը մեր ուսուցիչները և սաները գնում են III մանկապարտեզ, որտեղ երեխաներին ծանոթացնում և ներկայացնում են երաժշտական գործիքների հետ (դուդուկ, շվի, ակորդեոն, քանոն, ջութակ):

Կլարնետի բաժնի աշակերտ Նարեկ Մխիթարյանը մասնակցեց հանրապետության լավագույն և շնորհալի երեխաների համերգին՝ Երևանում:

Նոյեմբերի 30-ին դպրոցից 18 երեխաներ մասնակցեցին մարզային Ժողովրդական նվագարանների Համույթների և Ազգային երգի մարզային մրցույթ - փառատոնին, որը տեղի ունեցավ Մասիսում:

### Արդյունքները

Նարեկ Բադալյան – I մրցանակ դաս. Մանե Գրիգորյան

Համլետ Թևոսյան - I մրցանակ դաս. Սամվել Ավետյան

Խաչիկ Հայրապետյան - I մրցանակ դաս. Ալեքսան Սաֆարյան

Էլեն Ղևոնդյան – II մրցանակ դաս. Քնարիկ Այվազյան

Արեգնազ Ալահվերդյան – III մրցանակ դաս. Քնարիկ Այվազյան

Լիլիթ Պողոսյան - III մրցանակ դաս. Քնարիկ Այվազյան

Լևոն Ավետյան - III մրցանակ դաս. Սամվել Ավետյան

Լևոն Քոչարյան - III մրցանակ դաս. Հայկազ Ավազյան

Արտյում Ավետիսյան - խրախուսական դաս. Սամվել Ավետյան

Շնորհակալություն քաղաքապետին ավտոբուս տրամադրելու համար:

Դեկտեմբերի 3, 5 -ին դպրոցի 9-ը աշակերտներ մասնակցել են <<Ոսկե Տավիղ>> հանրապետական մրցույթ – փառատոնին և ստացել են մրցանակներ

Վեդու երաժշտական դպրոցի տնօրեն՝ Մանե Գրիգորյան - Շնորհակալագիր

Խաչիկ Հայրապետյան – Խտեղ - դասատու՝ Ալեքսան Սաֆարյան - Շնորհակալագիր

Լևոն Քոչարյան – Խտեղ - դասատու՝ Հայկազ Ավազյան - Շնորհակալագիր

Վահրամ Մանուկյան Խտեղ, դասատու՝ Նելլի Նիկողոսյան - Շնորհակալագիր

Համլետ Թևոսյան – Խտեղ, դասատու՝ Սամվել Ավետյան - Շնորհակալագիր

Լևոն Ավետյան – Խտեղ, դասատու՝ Սամվել Ավետյան - Շնորհակալագիր

Մարիամ Գրիգորյան - Շնորհակալագիր, դասատու՝ Նելլի Նիկողոսյան –  
Շնորհակալագիր

Նարե Սաֆարյան – Շնորհակալագիր, դասատու՝ Անի Հակոբյան - Շնորհակալագիր

Էլինա Սարոյան - Շնորհակալագիր, դասատու՝ Աննա Եղյան - Շնորհակալագիր

Դեկտեմբերին ելույթ ունեցան I դասարանցիները երդման արարողությամբ:

Տեղի ունեցավ ամանորին նվիրված միջոցառում:

I կիսամյակի վերջում բոլոր դասարաններում անցկացրեցինք ստուգարքներ:

Տնօրեն՝ ----- Մ.Գրիգորյան